ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

Թիվ 86 « 15» նոյեմբեր 2016թ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ*

*Հարգարժան պարոն Ղահրամանյան*

Ի կատարում <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզիԱրևադաշտ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 11–ի թիվ 3նիստի որոշումները:

Միժամանակ հայտնվում է, որ թիվ 3 նիստի N 2-ն որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության՝ պետական իրավական փորձաքննության :

Առդիր 61 թերթ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Հ. ՕՀԱՆՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112,86/12809-16
«16» 11 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«11»Նոյեմբեր 2016թ. N 2-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով ,56-րդ հոդվածի երկրորդ մասով,

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն`

1. Արևադաշտ համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտներից, հողի հարկից պակասեցնել 1.500.000 ՀՀ դրամ:
2. Պահուստային ֆոնդից 4891 հոդվածից պակասեցնել 1.500.000 ՀՀ դրամ :
   1) Աշխատակազմ 01-1-1 4212 հոդվածից 100.000 դրամ ուղղել 06-3-1 4212 հոդվածին:
   2) Աշխատակազմ 01-1-1 4233 հոդվածից 100.000 դրամ ուղղել 01-1-1 հատուկ նպատակային այլ նյութեր 4269 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Հ. ՕՀԱՆՅԱՆ

2016թվականի նոյեմբերի «11»-ի
թիվ 3 նիստ
գ.ԱՐԵՎԱԴԱՇՏ

Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի
ԹԻՎ 2 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ. Օհանյանս ներկայացնում եմ Ձեզ 2016 թվականի բյուջեն, որը կազմում է համայնքի զարգացման քառամյա ծրագիրը տվյալ տարվա բյուջետային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեն ներառում է ըստ եկամուտների և ծախսերի աղբյուրների: Գործառնական և տնտեսագիտական դասակարգման համապատասխան երեք տարվա կտրվածքով, այդ թվում եկամուտների և ծախսերի 2014թ. բյուջեն փաստացի, 2015թ. հաստատվածը և 2016թ. կանխատեսվող համապատասխան ցուցանիշներով:

| N | Եկամուտներ | 2016թ.. | 2015թ.. | 2014թ |
|---|---|---|---|---|
| 1. | Հողի հարկ | 6500 .0 | 6000 .0 | 8500 .0 |
| 2. | Գույքահարկ փոխադրամիջոցների | 350 .0 | 280 .0 | 260 .0 |
| 3. | Գույքահարկ շենքերի և շին. | 150. 0 | 130. 0 | 90 .0 |
| 4. | Պետական պահուստի հողեր | 800. 0 | 700.0 | 800 . 0 |
| 5. | Գույքի վարձակալություն | 1500. 0 | 1300.0 | 1200 . 0 |
| 6. | Դոտացիա | 5643.1 | 5643.1 | 3790 .3 |
| 7. | Տեղական տուրք | 50. 0 | 70.0 | 70 . 0 |
| 8 | Պետ բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | - | - | 112 .2 |
| 9 | Տարեսկզբի ազատ մնացորդ | 30.0 | - | - |
| | Ընդամենը | 15023.1 | 14123.1 | 14822 .5 |

Բյուջեի եկամուտների հաշվին կատարվող ծախսերը ըստ գործառական դասակարգման

| N | Ծախսերը | 2016թ. | 2015թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|
| 1. | Գյուղապետարան | 15023.1 | 14123.1 | 14822.5 |

Որից հետո ներկայացվեց բյուջեի հաշվին պահվող ապարատի հաստիքային թվաքանակի աշխատավարձի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը 2015թ. հաշվարկային ցուցանիշը, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների թվաքանակի մասին:

| N | Պաշտոնը | Աշխատավարձի չափը 2016թ. | Աշխատավարձի չափը 2015թ. |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 182838 դրամ | 182838 դրամ |
| 2 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 136680 դրամ | 136680 դրամ |
| 3 | Համայնքի ղեկավարի առաջատար մասնագետ (գլխավոր հաշվապահ) 3.2-1 | 134370 դրամ | 134370 դրամ |
| 4 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (հողաշինարար) 3.2-1 | 77904դրամ | 77904դրամ |
| 5 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (համակարգչային օպերատոր) 3.2-2 | 77904 դրամ | 77904 դրամ |
| 6 | Հարկ հավաքող /պայմանագրային/ | 77904դրամ | 77904դրամ |
| 7 | Գրադարանի վարիչ | 72751դրամ | 72751դրամ |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 760351 դրամ | 760351դրամ |

Բյուջեի եկամուտների հաշվին կատարված ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման:

| N | Անվանումը | 2016թ. | 2015թ . | 2014թ. |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 9684.1 | 8849.6 | 9212 .5 |
| 2 | Աշխատակազմի մասն. զարգ.ծառայություն | - | 150 .0 | ---- |
| 3 | Պարգևադրում | - | 460.0 | |
| 3 | Գործուղման ծախսեր | 150. 0 | 150.0 | 200 .0 |
| 4 | Գրասենյակային ծախսեր | 300. 0 | 300.0 | 200 .0 |
| 5 | Սոց. օգնության ֆոնդ | 1400.0 | 600.0 | 1600 .0 |
| 6 | Էլ. էներգիայի ծախսեր | 400 .0 | 400.0 | 500. 0 |
| 7 | Ընդհանուր բնույթի ծառայ. | 1230.0 | 1100.0 | 1091 .0 |
| 8 | Տրանսպորտային ծառ. վճար | 600. 0 | 600.0 | 500 .0 |
| 9 | Տեղեկատվական ծառայություններ | 200. 0 | 250.0 | 250 .0 |
| 10 | Այլ ծախսեր (պահուստային ֆոնդ) | 389.0 | 733.5 | 449 .0 |
| 11 | Մասնագիտական ծառայություններ | 200.0 | 100.0 | 120.0 |
| 12 | Կապի ծառայություններ | 120.0 | 120.0 | 120.0 |
| 13 | Համակարգչային ծառայություններ | 150.0 | 150.0 | 150.0 |
| 14 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 100.0 | 60.0 | - |
| 15 | Մեքենաների և սարք. ընթ. նորոգ. | 100.0 | 100.0 | 100.0 |
| 16 | Կառավարչական ծառայություն | - | - | 330.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 15023.1 | 14123.1 | 14822 .5 |

Իսկականի հետ ճիշտ է

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.ՕՀԱՆՅԱՆ

Հաշվապահ Ս.ՔԱՆԴՈՅԱՆ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24_Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2_Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին N 2-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 2-Ն որոշման Ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման իրավական կողմի ապահովման համար ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու անհրաժեշտություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՕՀԱՆՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 11

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՕՀԱՆՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 11